# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ,
գ.Երվանդաշատ, Ազատության փող. 24,
Հեռ. (093) 197080 , yervandashat.armavir@mta.gov.am

N 138
*26 սեպտեմբեր 2019թ.*

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու N 07 հերթական նիստի N 13, 14, 15 որոշումները կայացած 23.09.2019 թվականին:

Առդիր 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա-1693Ի-2019
26 09 2019

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 13

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշեց՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 23-ի N 7 հերթական նիստի օրակարգի 13, 14, 15 հարցերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Երվանդաշատ
համայնքի ավագանու 2019 թվականի
սեպտեմբերի 23-ի N 7 նիստի N 13 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

1.Երվանդաշատ համայնքի ավագանու N 7 նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

2.Երվանդաշատի համայնքապետարանի տարածքում առկա ազդարարման համակարգի սարքավորումները և դրանց լրակազմերը համայնքային հաշվեկշռում հաշվառելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

3.Երվանդաշատ համայնքի 2019 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Ավետիսյան/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 14

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՐԱԿԱԶՄԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, բնակչության ազդարարման և իրազեկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի 346-Ն որոշման հավելվածի 21-րդ և 22-րդ կետերի պահանջները Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշեց՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Երվանդաշատի համայնքապետարանի տարածքում առկա ԼԴ-800 մակնիշի էլեկտրական շչակը, դրա լրակազմ հանդիսացող կառավարման վահանակը և էլ հաշվիչը՝ որպես գույքային արժեք հաշվառել համայնքի հաշվեկշռում:

2.Սահմանել որ վերը նշված ազդարարման համակարգի սարքավորումների պահպանման և սպասարկման համար պատասխանատու են հանդիսանում՝
ա. համայնքի քաղաքացիական պաշտպանության շտաբի պետը,
բ. համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման խումբը:

3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

4.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ղեկավարին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՋԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Երվանդաշատ, (093) 197080, yervandashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով Երվանդաշատ համայնքի

Ավագանին որոշում է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 06-ի բյուջեն հաստատելու մասին N 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը

1.1.Երվանդաշատ համայնքի 2019 թվականի վարչական բյուջեի եկամտային մասի տող 1343 րը (այլ վճար) 1500.0 հազ. դրամ պակասեցնել, իսկ տող 1257-ին ավելացնել 1500,0 հազ. դրամ:

1.2.Ծախսային մասով՝
ա.բաժին 04, խումբ 2, դաս 4 5113 հոդվածից պակասեցնել 3500,0 հազ. դրամ, որից 3150,0 հազ. դրամ ավելացնել
բ.բաժին 01, խումբ 1, դաս 1 5122 հոդվածին 550,0 հազ. դրամ
5129 հոդվածին 350,0 հազ. դրամ
5121 հոդվածին 1800,0 հազ. դրամ
5113 հոդվածին 450.0 հազ. դրամ իսկ մնացած 350,0 հազ. դրամը ավելացնել բաժին 01, խումբ 6 դաս 1 5122 հոդվածին:

1.3.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 950,0 հազ. դրամով, որն ավելացնել բաժին 01, խումբ 6, դաս 1 4819 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՓՐԻԿՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶԱՎԵՆ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՇԱՀԻՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**